



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME  
ԶՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՄԱՑԱԿԱՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 2463/12)

ՎՃԻՌ

Հոդված 6, կետ 1 (քաղաքացիաիրավական) • Դատարանի մատչելիությունը • Վարչական շրջանի դատարանի դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթից հետո նրան պաշտոնից վաղաժամկետ ազատելը • Արդարադատության խորհրդի՝ իրեն պաշտոնից ազատելու առաջարկի վերաբերյալ որոշումը դատական կարգով վերանայելու համար դիմելու անկարողությունը • 6-րդ հոդվածը կիրառելի է • Դատական վերանայման բացակայությունը բացառապես հիմնավորող ծանրակշիռ պատճառներ չկան • Դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը խախտված է

ՍՏԴԱՍԲՈՒՐԳ

6 դեկտեմբերի 2022թ.

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

**Մնացականյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),  
հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Յոնկո Գրոզեւ [Yonko Grozev]՝ *Նախագահ,*

Թիմ Այքը [Tim Eicke],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր [Gabriele Kucsko-Stadlmayer],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova],

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking],

Անա Մարիա Գեռա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ,*

եւ Իլզե Ֆրայվիրթ [Ilse Freiwirth]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Սամվել Մնացականյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2011 թվականի դեկտեմբերի 24-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 2463/12),

դիմումատուի՝ դատարանի մատչելիության, ազատորեն արտահայտվելու եւ խտրականությունից զերծ մնալու իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ բողոքների մասին Հայաստանի կառավարությանը (Կառավարություն) ծանուցելու եւ գանգատը մնացած մասով անընդունելի հայտարարելու վերաբերյալ որոշումը,

կողմերի դիտարկումները,

դիմումատուի այրու եւ դստեր գրությունը, որով նրանք Դատարանին տեղեկացրել են դիմումատուի մահվան եւ նրա կողմից ներկայացված գանգատի քննությունն իրենց կողմից շարունակելու իրենց ցանկության մասին,

2021 թվականի նոյեմբերի 23-ին եւ 2022 թվականի նոյեմբերի 15-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նշված վերջին օրը.

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գործը վերաբերում է դիմումատուի՝ դատավորի պաշտոնից ազատելու առաջարկի վերաբերյալ որոշումը դատական կարգով վերանայելու համար դիմելու ենթադրյալ անկարողությանը: Դիմումատուն նաեւ համարել է, որ իրեն պաշտոնից ազատելով խախտվել է ազատ արտահայտվելու իր իրավունքը եւ այն խտրական բնույթ է կրել:

### ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատուն ծնվել է 1956 թվականին եւ մինչեւ մահանալը, ինչը տեղի է ունեցել 2021 թվականի օգոստոսի 17-ին, ապրել է Երեւանում: Նրան ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Ղազարյանը:

3. Կառավարությունը ներկայացրել է Կառավարության լիազոր ներկայացուցիչ, Միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գործով փաստերը կարելի է ամփոփել հետեյալ կերպ:

5. 2011 թվականի ապրիլի 30-ին ոստիկանությունը ուն Ա.Կ.-ին մեղադրանք է առաջադրել ավազակության համար:

6. Նույն օրը դիմումատուն, որը Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր է եղել, բավարարել է Ա. Կ.-ին երկու ամիս ժամկետով կալանավորելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը: Այդ որոշումը վերաքննիչ բողոքի շրջանակներում թողնվել է անփոփոխ:

7. 2011 թվականի մայիսի 30-ին դիմումատուն բավարարել է Ա. Կ.-ի՝ գրավի դիմաց նրան ազատ արձակելու վերաբերյալ միջնորդությունը:

8. 2011 թվականի հունիսի 1-ին Վճռաբեկ դատարանի նախագահը պահանջել է, որ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը (Կարգապահական հանձնաժողով) կարգապահական վարույթ հարուցի դիմումատուի դեմ՝ 2011 թվականի մայիսի 30-ին վերջինիս կողմից կայացված որոշումը պատշաճ կերպով պատճառաբանված չլինելու հիմքով:

9. 2011 թվականի հունիսի 2-ին Կարգապահական հանձնաժողովն ուսումնասիրել է համապատասխան նյութերը եւ հանգել այն եզրակացության, որ դիմումատուի 2011 թվականի մայիսի 30-ի որոշումը զուրկ է եղել պատշաճ պատճառաբանումներից, եւ որ նա մասնագիտական ունակությունների բավարար մակարդակ չի դրսեւորել:

10. 2011 թվականի հունիսի 13-ին դիմումատուն գրավոր հայտարարություններ է ներկայացրել իր դեմ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ: Նա պնդել է, *inter alia* (*ի թիվս այլնի*), որ ընդունելի չէր տարբերվող կարծիք ունենալու համար դատավորին պատժելը կամ առկա գործելակերպով կամ սովորությամբ առաջնորդվելը, որը կարող էր դիտարկվել որպես կամայական:

11. 2011 թվականի հունիսի 16-ին Կարգապահական հանձնաժողովը դիմել է Արդարադատության խորհրդին՝ պահանջելով կարգապահական տույժ կիրառել դիմումատուի նկատմամբ, քանի որ, իր կարծիքով, նա թույլ էր տվել քրեական դատավարության նորմերի կոպիտ խախտում եւ դատավորի վարքագծի կանոնների կոպիտ խախտում:

12. 2011 թվականի հունիսի 24-ին Արդարադատության խորհուրդը լսում է անցկացրել դիմումատուի մասնակցությամբ, որը պատասխանել է Խորհրդի անդամների կողմից իրեն ուղղված հարցերին:

13. Միեւնույն օրը Արդարադատության խորհուրդն ընդունել է որոշում՝ Հայաստանի Հանրապետության նախագահին առաջարկելով դիմումատուին ազատել իր պաշտոնից: Այդ որոշման համապատասխան մասերն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«Քննարկելով [դիմումատուին] կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով [Կարգապահական հանձնաժողովի] անդամի զեկույցը, [եւ] դատավորի բացատրությունները, ինչպես նաեւ հետազոտելով ապացույցներն ու նյութերը, ... [Արդարադատության] խորհուրդը գտնում է, որ [Կարգապահական հանձնաժողովի] դիմումը պետք է բավարարվի հետեւյալ պատճառներով՝

...

[հղում Կոնվենցիայի 6-րդ հոդվածին, Սահմանադրությանը, Դատական օրենսգրքին, Դատական էթիկայի կանոններին, Քրեական դատավարության օրենսգրքին եւ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքին՝ կապված դատարանների՝ իրենց կողմից կայացված որոշումներին բավարար պատճառաբանություններ տալու պարտականության հետ]

...

[Արդարադատության] խորհուրդը գտնում է, որ [դիմումատուն] իր 2011 թվականի մայիսի 30-ի որոշման մեջ չի ներկայացրել որեւէ պատճառաբանություն՝ հիմնավորելու համար կալանքը [գրավով] փոխարինելու վերաբերյալ իր կայացրած որոշումը, եւ փոխարենը որոշման պատճառաբանական մասում նա ընդամենը նշել է պաշտպանության կողմի կողմից ներկայացված փաստարկները եւ այդ կապակցությամբ [մեղադրանքի կողմի] դիրքորոշումը... Դատարանը չի նշել որեւէ փաստական հանգամանք, որը թույլ կտար եզրակացնել, որ 2011 թվականի ապրիլի 30-ի որոշման մեջ նշված կալանքի հիմքերն այլեւս գոյություն չունեն:

[Հղում Արդարադատության խորհրդի մեկ այլ որոշման, որտեղ այն համարել է, որ անձին կալանքի տակ պահելու որոշումը եղել է կամայական, քանի որ համապատասխան դատավորը բավարար պատճառներ չի ներկայացրել]

ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

Հաշվի առնելով վերոհիշյալ որոշման մեջ արտահայտված դիրքորոշումը եւ այն համեմատելով տվյալ գործի հանգամանքների հետ՝ [Արդարադատության] խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում նույնպես [դիմումատուն] կամայական մոտեցում է ցուցաբերել, քանի որ փաստերի վրա չհիմնված եւ պատճառաբանություններից զուրկ որոշում կայացնելը կամայականության դրսևորում է՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ դատական ակտով անձը կալանավորվում է, թե ազատվում է կալանքից...

Հաշվի առնելով վերոգրյալը՝ [Արդարադատության] խորհուրդը գտնում է, որ ... [դիմումատուին] չի հաջողվել հիմնավորել դատական որոշումը ... դրանով իսկ թույլ տալով դատավարական օրենքի նորմի ակնհայտ եւ կոպիտ խախտում եւ չի ցուցաբերել մասնագիտական ունակությունների բավարար մակարդակ ... թույլ տալով դատավորի վարքագծի կանոնների կոպիտ խախտում ...

[Արդարադատության] խորհուրդն անհրաժեշտ է համարում անդրադառնալ [Կարգապահական հանձնաժողովի] առջեւ [դիմումատուի կողմից] բարձրացված փաստարկներին:

Ըստ [դիմումատուի] իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսացել այն փաստը, որ ինքը գրավի դիմաց ազատ է արձակել ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձի:

... կալանքը գրավով փոխարինելու մասին որոշումն ինքնին ... [դիմումատուի] դեմ վարույթ հարուցելու վերաբերյալ [Կարգապահական հանձնաժողովի] որոշման մեջ քննարկման առարկա չի եղել...

Կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսացել անհրաժեշտ մասնագիտական ունակությունների բացակայությունը, ինչը հանգեցրել է դատավորի էթիկայի կանոնների կոպիտ խախտման, ինչպես նաեւ կամայական մոտեցում ցուցաբերող չպատճառաբանված եւ չհիմնավորված որոշում կայացնելուն:

...

[Արդարադատության] խորհուրդը հարկ է համարում ընդգծել, որ [դիմումատուի] նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հիմք է ոչ թե նրա կողմից անձին գրավի դիմաց ազատ արձակելու փաստը, այլ չպատճառաբանված որոշման կայացումը..., ինչը [Արդարադատության] խորհուրդը դիտարկում է որպես կամայականության դրսևորում:

...»:

14. 2011 թվականի հուլիսի 8-ին Փաստաբանների պալատը հրապարակել է դիմումատուին աջակցող հրապարակային հայտարարություն՝ Արդարադատության խորհրդին մեղադրելով դատավորների նկատմամբ իր կարգապահական լիազորությունները խտրականորեն կիրառելու մեջ: Դրանում ընդգծվել է, որ դատավորների նկատմամբ կարգապահական միջոցների այդպիսի խտրական կիրառման պատճառն Արդարադատության խորհրդի կողմնակալությունն էր՝ հոգուտ մեղադրանքի կողմի: Փաստաբանների պալատն իր հայտարարության մեջ ներառել է քաղվածքներ այլ դատավորների կողմից կալանք նշանակելու եւ (կամ) գրավի միջնորդությունը մերժելու մասին որոշումներից՝ պնդելով, որ այդ որոշումներում պարունակվող պատճառաբանությունները նման էին դիմումատուի կողմից 2011 թվականի մայիսի 30-ին կայացված որոշման մեջ բերված պատճառաբանություններին:

15. 2011 թվականի հուլիսի 11-ին Հայաստանի Հանրապետության նախագահը հրամանագիր է հրապարակել դիմումատուի՝ որպես դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին:

16. 2011 թվականի օգոստոսի 24-ին դիմումատուն հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ խնդրելով անվավեր կամ ի սկզբանե առոչինչ ճանաչել Արդարադատության խորհրդի 2011 թվականի հունիսի 24-ի որոշումը եւ Նախագահի 2011 թվականի հուլիսի 11-ի հրամանագիրը:

17. 2011 թվականի օգոստոսի 31-ին Վարչական դատարանը մերժել է Արդարադատության խորհրդի 2011 թվականի հունիսի 24-ի որոշման դեմ դիմումատուի հայցը վարույթ ընդունելը եւ Նախագահի 2011 թվականի հուլիսի 11-ի հրամանագրի դեմ նրա հայցը ճանաչել է անընդունելի՝ դատավարական հիմքերով: Մասնավորապես Վարչական դատարանը նշել է, որ Դատական օրենսգրքի համաձայն՝ Արդարադատության խորհուրդը գործել է որպես դատարան, երբ կայացրել է 2011 թվականի հունիսի 24-ի որոշումը, որը ենթակա չէր բողոքարկման, քանի որ Դատական օրենսգրքով ակնհայտորեն բացառվում էր այդպիսի որոշումների՝ դատական կարգով հետագա վերանայումը: Ինչ վերաբերում է

դիմումատուի՝ Նախագահի 2011 թվականի հուլիսի 11-ի հրամանագիրը վիճարկող բողոքին, ապա Վարչական դատարանը համարել է, որ դիմումատուն չի նշել բողոքը հիմնավորող իրավական հիմքերը եւ նրան տասնհինգ օր ժամանակ է տվել իր բողոքը շտկելու եւ այն կրկին ներկայացնելու համար:

18. Դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել: Նա պնդել է, որ Արդարադատության խորհուրդն ավելի շուտ վարչական մարմին էր, քան դատարան, քանի որ այն չուներ դատարանի համար պահանջվող դատական այնպիսի որակներ, ինչպիսիք էին անկախությունն ու անաչառությունը: Այդ առնչությամբ նա վկայակոչել է այն փաստը, որ Արդարադատության խորհրդում ընդգրկված են եղել չորս իրավաբան գիտնականներ, որոնք պրոֆեսիոնալ դատավորներ չէին: Նա նաեւ պնդել է, որ Արդարադատության խորհրդում իրականացվող վարույթով չեն առաջարկվել նույն աստիճանի դատավարական երաշխիքներ, ինչպիսիք առաջարկում են սովորական դատարանները:

19. 2011 թվականի հոկտեմբերի 12-ին Վարչական վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը:

20. 2011 թվականի նոյեմբերի 23-ին Վճռաբեկ դատարանը դիմումատուի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը ճանաչել է անընդունելի:

21. 2011 թվականի դեկտեմբերի 14-ին դիմումատուն կրկին ներկայացրել է իր պահանջն այն մասով, որը վերաբերում էր Նախագահի 2011 թվականի հուլիսի 11-ի հրամանագրին:

22. 2012 թվականի մայիսի 2-ին Վարչական դատարանը մերժել է դիմումատուի պահանջը՝ համարելով, որ Նախագահի 2011 թվականի հուլիսի 11-ի հրամանագիրն ընդունվել է օրենքի պահանջներին համապատասխան, այսինքն՝ Արդարադատության խորհրդի 2011 թվականի հունիսի 24-ի որոշման հիման վրա, հետևաբար այն անվավեր ճանաչելու հիմքեր չկային:

23. Նրա հետագա բողոքները 2012 թվականի հոկտեմբերի 24-ին մերժվել են



Վճռաբեկ դատարանի կողմից:

24. Դիմումատուի դիմումի հիման վրա 2012 թվականի դեկտեմբերի 18-ին Սահմանադրական դատարանը որոշում է կայացրել, որում մասնավորապես նշվում է, որ Դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

**I. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

**Ա. 1995 թվականի Սահմանադրությունը (2005 թվականի նոյեմբերի 27-ին կատարված փոփոխություններից հետո)**

25. Սահմանադրության՝ տվյալ ժամանակահատվածում գործող համապատասխան դրույթները շարադրված են հետևյալ բովանդակությամբ.

**Հոդված 55**

«Հանրապետության Նախագահը՝

...

11) արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի եւ նրա պալատների նախագահներին եւ դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի եւ մասնագիտացված դատարանների նախագահներին, դադարեցնում է նրանց լիազորությունները, համաձայնություն է տալիս նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ, արդարադատության խորհրդի եզրակացությամբ նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի եւ մասնագիտացված դատարանների դատավորներին.

...»:

**Հոդված 94.1**

«Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով ձեւավորվում եւ գործում է արդարադատության խորհուրդը:

Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ:

Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի»:

#### **Հոդված 95**

«Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով՝

...

5) դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին»:

#### **Հոդված 96**

«Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի են: Դատավորը եւ սահմանադրական դատարանի անդամը պաշտոնավարում են մինչեւ 65 տարին լրանալը: Նրանց լիազորությունները դադարեցվում են միայն Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով»:

#### **Բ. Դատական օրենսգիրք (ուժի մեջ է եղել 2007 թվականի մայիսի 18-ից 2018 թվականի ապրիլի 9-ը)**

26. Դատական օրենսգրքի՝ տվյալ ժամանակահատվածում գործող համապատասխան դրույթները հետեւյալն էին.

27. 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորը պաշտոնավարում է մինչեւ իր 65 տարին լրանալը:

28. 97-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատության խորհուրդն անկախ մարմին է, որը Սահմանադրությամբ նախատեսված իր լիազորություններն

իրականացնում է սույն օրենսգրքով նախատեսված կարգով:

29. 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատության խորհրդի դատավոր անդամներն ընտրվում են Դատավորների ընդհանուր ժողովում՝ ըստ հետևյալ խմբերի՝ Երեւանի ընդհանուր իրավասության դատարաններից՝ մեկ անդամ, մարզերի ընդհանուր իրավասության դատարաններից՝ երկու անդամ, վերաքննիչ քաղաքացիական դատարանից՝ մեկ անդամ, վերաքննիչ քրեական դատարանից՝ մեկ անդամ, վերաքննիչ վարչական դատարանից՝ մեկ անդամ, վարչական դատարանից՝ մեկ անդամ, վճռաբեկ դատարանից՝ երկու անդամ:

30. 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումները կամ նրա լիազորությունները դադարեցնելու մասին Հանրապետության նախագահին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ Արդարադատության խորհրդի որոշումները վերջնական են, ուժի մեջ են մտնում Արդարադատության խորհրդի նիստում հրապարակման պահից եւ բողոքարկման ենթակա չեն:

31. 153-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավազորություն ունի Արդարադատության խորհուրդը՝ միեւնույն դրույթի երկրորդ մասում սպառիչ կերպով նախատեսված հանգամանքներում:

153-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերն են՝ արդարադատություն իրականացնելիս դատավարական օրենքի նորմի ակնհայտ եւ կոպիտ խախտումը (153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ) կամ դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտում թույլ տալը (153-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ):

32. 157-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը քննելու արդյունքում

Արդարադատության խորհուրդը կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը.

- 1) նախազգուշացում.
- 2) նկատողություն, որը գուգորդվում է՝ դատավորին 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով.
- 3) խիստ նկատողություն, որը գուգորդվում է՝ դատավորին 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով.
- 4) դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության նախագահին դիմելը:

33. 158-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան: Արդարադատության խորհրդի կողմից գործերի քննության կարգը կարգավորվում է Վարչական դատավարության օրենսգրքով, որքանով այն իր էությամբ կիրառելի է:

34. 160-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս նա իրավունք ունի՝

- 1) ծանոթանալու Արդարադատության խորհրդում հարցի քննության համար հիմք հանդիսացող նյութերին, քաղվածքներ անելու, ստանալու դրանց պատճենները.
- 2) հարցեր տալու ելույթ ունեցողին, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու եւ միջնորդություններ անելու.
- 3) ապացույցներ ներկայացնելու եւ մասնակցելու դրանց հետազոտմանը.
- 4) մասնակցելու նիստին՝ հանդես գալով անձամբ կամ փաստաբանի միջոցով:

Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորն օգտվում է Սահմանադրության 19-րդ հոդվածով եւ Սարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքներից (Դատական օրենսգրքի 160-րդ հոդվածի 4-րդ մաս):

35. 166-րդ հոդվածով սահմանված է, որ Եթե Հանրապետության նախագահը Արդարադատության խորհրդի՝ դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, չի դադարեցնում դատավորի լիազորությունները, ապա միջնորդությունը համարվում է մերժված: Այդ դեպքում օրենքի ուժով դատավորը համարվում է համապատասխանաբար սույն օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված կարգապահական տույժի ենթարկված (տե՛ս վերելում՝ 32-րդ պարբերությունը):

**Գ. «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» 2004 թվականի օրենք**

36. 38-րդ հոդվածով սահմանված է, որ վարչական մարմինը պարտավոր է վարույթի մասնակիցներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

**II. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ**

37. 2010 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված՝ «Դատավորների անկախության, արդյունավետության եւ պարտականությունների մասին» անդամ պետություններին ուղղված՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)12 հանձնարարականի հավելվածի համապատասխան քաղվածքն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Պատասխանատվությունն ու կարգապահական վարույթը

66. Գործերով որոշումներ կայացնելու համար դատավորների կողմից օրենքի մեկնաբանումը, փաստերի կամ ապացույցների գնահատումը չպետք է առաջացնեն քաղաքացիական կամ կարգապահական պատասխանատվություն՝ բացառությամբ հանցավոր մտադրության եւ կոպիտ անփութության դեպքերի:

...»:

38. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին ուղղված՝ 2002 թվականի նոյեմբերի 19-ին ընդունված՝ «Դատավորների մասնագիտական վարքագծի կանոնների, մասնավորապես՝ էթիկայի կանոնների, անհամատեղելի վարքագծի եւ անկողմնակալության մասին սկզբունքների եւ կանոնների մասին» Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհրդի (ԵԴԽԴ) թիվ 3 (2002) կարծիքի համապատասխան մասերը շարադրված են հետեւյալ բովանդակությամբ (ծանոթագրությունները բաց են թողնված).

«գ. Կարգապահական պատասխանատվությունը

...

59. Ծագող հարցերն են՝

i) Դատավորի կողմից դրսևորված ինչպիսի՞ վարքագծի դեպքում նա կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

...

60. Ինչ վերաբերում է (i) հարցին, ապա առաջին կետը, որը ԵԴԽԴ-ն մատնանշում է (ըստ էության կրկնելով այս կարծիքում ավելի վաղ նշված կետը), այն է, որ համապատասխան մասնագիտական չափանիշների խախտումները կարգապահական տույժերի հավանական պատճառ հանդիսացող անընդունելի վարքագծի հետ կապելը ճիշտ չէ: Մասնագիտական չափանիշները, որոնք սույն կարծիքի առաջին մասում քննարկման առարկա են եղել, ներկայացնում էին այն լավագույն գործելակերպը, որը բոլոր դատավորները պետք է ձգտեին զարգացնել, եւ որին պետք է ձգտեին բոլոր դատավորները: Դա կխոչընդոտեր այդպիսի չափանիշների հետագա զարգացումը եւ թույլ չէր տա ճիշտ ընկալել դրանք կարգապահական վարույթը հիմնավորող անընդունելի վարքագծի հետ նույնականացնելու նպատակը: Կարգապահական վարույթը հիմնավորելու համար անընդունելի վարքագիծը պետք է լինի լուրջ եւ ծանր, այնպես, որ այն հնարավոր չլինի պայմանավորել պարզապես այն հանգամանքով, որ չեն պահպանվել ուղեցույցներում ամրագրված մասնագիտական այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են սույն կարծիքի առաջին մասում քննարկվածները»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

39. Նախ եւ առաջ Դատարանը նշում է, որ դիմումատուն մահացել է 2021 թվականի օգոստոսի 17-ին (տե՛ս վերելում՝ 2-րդ պարբերությունը), մինչ գործը գտնվում էր Դատարանի վարույթում: Դիմումատուի այրին՝ տկն Լիա Մնացականյանը, եւ նրա դուստրը՝ օրիորդ Հասմիկ Մնացականյանը, որոնք նրա ժառանգներն են, Դատարանին տեղեկացրել են, որ ցանկանում են հետամուտ լինել նրա կողմից ներկայացված գանգատին:

40. Կառավարությունը պնդել է, որ գանգատում բարձրացված բողոքներն անձնական բնույթ են կրել եւ վերաբերել են չփոխանցվող իրավունքներին, եւ հետեւաբար Դատարանին առաջարկել է գանգատը հանել իր գործերի ցուցակից:

41. Դատարանը բազմիցս ընդունել է, որ այն դեպքում, երբ դիմումատուն գանգատը ներկայացնելուց հետո մահացել է, մերձավոր ազգականներն իրավունք ունեն զբաղեցնելու նրա տեղը վարույթում, եթե նրանք նման ցանկություն հայտնեն (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Դալբանն ընդդեմ Ռումինիայի [ՄՊ] [Dalban v. Romania [GC]]*, թիվ 28114/95, §§ 38-39, ՄԻԵԴ 1999-VI, *Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի [Ashot Harutyunyan v. Armenia]*, թիվ 34334/04, §§ 86-87, 2010 թվականի հունիսի 15, եւ *Էրզեզենն ընդդեմ Թուրքիայի [Ergezen v. Turkey]*, թիվ 73359/10, §§ 27-30, 2014 թվականի ապրիլի 8):

42. Այս առնչությամբ Դատարանը կրկին նշում է, որ այս հարցը քննարկելիս հիմնական խնդիրը ոչ թե այն է, թե քննարկվող իրավունքները փոխանցելի են ընթացակարգը շարունակել ցանկացող ժառանգներին, թե՛ ոչ, այլ այն, թե արդյոք ժառանգները կամ մերձավոր ազգականները կարող են սկզբունքորեն իրավաչափ շահ հետապնդել՝ Դատարանից պահանջելով գործը քննել դիմումատուի՝ Դատարան գանգատ ներկայացնելու իր անհատական եւ անձնական իրավունքից օգտվելու ցանկության հիման վրա (տե՛ս վերելում հիշատակված՝ *Էրզեզենի* գործը,

§ 29. *Քսենզր եւ այլք ընդդեմ Ռուսաստանի [Ksenz and Others v. Russia]*, թիվ 45044/06 եւ եւս 5-ը, §§ 86-87, 2017 թվականի դեկտեմբերի 12, եւ *Բարախունեն ընդդեմ Ռուսաստանի [Barakhoyev v. Russia]*, թիվ 8516/08, §§ 22-23, 2017 թվականի հունվարի 17): Այնուհետեւ այն կրկնել է, որ մարդու իրավունքների վերաբերյալ գործերն ընդհանուր առմամբ ունեն բարոյական հարթություն, եւ դիմումատուին մոտ կանգնած անձինք հետեւաբար կարող են իրավաչափ շահ ունենալ արդարադատության իրականացումն ապահովելու համար՝ նույնիսկ դիմումատուի մահից հետո (տե՛ս վերելում հիշատակված՝ *Քսենզր եւ այլք* գործը, § 86, եւ *Մալխաուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշում) [ՄՊ] [*Malhous v. the Czech Republic* (dec.) [GC]], թիվ 33071/96, ՄԻԵԴ 2000-XII):

43. Ելնելով վերոգրյալից եւ հաշվի առնելով սույն գործի հանգամանքները՝ Դատարանն ընդունում է, որ դիմումատուի ժառանգները հանգուցյալ դիմումատուի փոխարեն գանգատը շարունակելու իրավաչափ շահ ունեն: Հետեւաբար նրանց խնդրանքով Դատարանը կշարունակի գործով քննությունը: Այնուամենայնիվ, հարմարության տեսանկյունից ելնելով՝ այն կշարունակի սույն վճռում որպես դիմումատու նկատի ունենալ պրն Մնացականյանին (տե՛ս, օրինակ, վերելում հիշատակված՝ *Դալբանի* գործը, § 1):

## II. ԿՈՆՎԵՆՅՈՒՄԻ 6-ԸՆԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

44. Դիմումատուն բողոքել է, որ իրեն զրկել են դատավորի պաշտոնից իր վաղաժամկետ ազատումը վիճարկելու համար դատարան դիմելու իրավունքից: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա, որով, այնքանով, որքանով այն վերաբերում է գործին, սահմանվում է հետեւյալը.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... տրիբունալի կողմից ... արդարացի ... լսումների իրավունք ...»:



**Ա. Ընդունելիությունը**

*1. Կողմերի փաստարկները*

45. Կառավարությունը պնդել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածն այս գործի վրա չի տարածվում: Նրանք պնդել են, որ տվյալ ժամանակահատվածում գործող՝ Դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով (տե՛ս վերելում՝ 30-րդ պարբերությունը) դիմումատուն ակնհայտորեն զրկվել է դատական համակարգում զբաղեցրած պաշտոնից իրեն ազատելու առաջարկի վերաբերյալ Արդարադատության խորհրդի որոշումը վիճարկելու համար դատարան դիմելու իր իրավունքից: Նրանք պնդել են նաև, որ այս բացառումը հիմնավորվում էր օբյեկտիվ հիմքերով: Մասնավորապես, հաշվի առնելով հանրային լիազորություն իրականացնող դատավորի հատուկ կարգավիճակը, պետությունը հատուկ ընթացակարգ էր նախատեսել դատավորների նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու, այդ թվում՝ նրանց լիազորությունները դադարեցնելու համար՝ ստեղծելով առանձին մարմին՝ Արդարադատության խորհուրդը, որն արդար դատաքննության երաշխիքներին համապատասխան դատական գործառույթներ իրականացնող անկախ եւ անկողմնակալ մարմին էր:

46. Դիմումատուն միայն նշել է, որ ինքը շարունակում է պնդել իր բողոքները: Իր կողմից ներկայացված գանգատում նա բողոք էր ներկայացրել այն փաստի առնչությամբ, որ դատավորները զրկված էին Արդարադատության խորհրդի որոշումները դատական կարգով վերանայելու համար դիմելու հնարավորությունից, որը, նրա պնդմամբ, «տրիբունալ» չէ՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով: Նա այնուհետև պնդել է, որ Արդարադատության խորհրդի որոշումները վիճարկելու համար դատավորներին ընդհանուր իրավասության դատարան դիմելու իրավունքից զրկելու համար որեւէ օբյեկտիվ հիմնավորում չկա՝ հաշվի առնելով, որ Արդարադատության խորհրդում իրականացվող վարույթով չեն առաջարկվում նույն դատավարական երաշխիքները, ինչպիսիք առկա են ընդհանուր իրավասության դատարաններում իրականացվող վարույթներում:

2. Դատարանի գնահատականը

ա) Իրավունքի առկայությունը

47. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետն իր քաղաքացիաիրավական հայեցակետով տարածվում է միայն «քաղաքացիական իրավունքի» շուրջ ծագած «վեճի» (ֆրանսերեն տեքստում՝ «վիճարկում» [contestations]) վրա, որը, կարելի է ասել, թեկուզ փաստարկելի հիմքերով, պետք է ճանաչվի ներպետական իրավունքով՝ անկախ դրա՝ Կոնվենցիայով պաշտպանված լինելու հանգամանքից: Վեճը պետք է լինի իրական եւ լուրջ. այն կարող է վերաբերել ոչ միայն իրավունքի փաստացի առկայությանը, այլեւ դրա շրջանակին եւ կիրառման եղանակին: Վարույթի արդյունքը պետք է ուղղակիորեն որոշիչ լինի տվյալ իրավունքի հարցում, զուտ աննշան կապը կամ հեռակա հետեւանքները բավարար չեն 6-րդ հոդվածի 1-ին կետը գործի դնելու համար (տե՛ս *Միկալլեֆն ընդդեմ Մալթայի* [ՄՊ] [*Micallef v. Malta* [GC]], թիվ 17056/06, § 74), ՄԻԵԴ 2009թ., եւ *Բուլուան ընդդեմ Լյուքսեմբուրգի* [ՄՊ] [*Boulois v. Luxembourg* [GC]], թիվ 37575/04, § 90, ՄԻԵԴ 2012թ.):

48. Դատարանը նշում է, որ դիմումատուն, որը տվյալ պահին մոտավորապես 55 տարեկան էր, Հայաստանի իրավունքով, ներառյալ՝ Սահմանադրությամբ, իրավունք ուներ որպես դատավոր ծառայելու մինչեւ 65 տարեկանը (տե՛ս վերելում՝ 25-րդ եւ 27-րդ պարբերությունները): Ավելին, նրա լիազորությունները կարող էին վաղաժամկետ դադարեցվել միայն բացառիկ դեպքերում՝ Արդարադատության խորհրդի առաջարկությամբ (տե՛ս վերելում՝ 25-րդ, 31-րդ եւ 32-րդ պարբերությունները): Թեեւ դատավորները պաշտոնից ազատվում էին Նախագահի հրամանագրով, պարզ է, որ համապատասխան հրամանագրի իրավական հիմքը դատավորների նկատմամբ Արդարադատության խորհրդում հարուցված կարգապահական վարույթի արդյունքում վերջինիս կողմից արված առաջարկությունն էր (տե՛ս վերելում՝ 31-րդ, 32-րդ եւ 35-րդ

պարբերությունները): Հետևաբար Դատարանը գտնում է, որ սույն գործում եղել է իրական եւ լուրջ վեճ «իրավունքի» շուրջ, որը դիմումատուն կարող էր փաստարկելի հիմքերով պահանջել ներպետական իրավունքի համաձայն (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Ստուրուան ընդդեմ Վրաստանի* [*Sturua v. Georgia*], թիվ 45729/05, § 24, 2017 թվականի մարտի 28, եւ *Կամենսն ընդդեմ Կիպրոսի* [*Kamenos v. Cyprus*], թիվ 147/07, §§ 64-71, 2017 թվականի հոկտեմբերի 31): Մնում է պարզել, թե արդյոք քննարկվող իրավունքը քաղաքացիական բնույթ էր կրում:

#### բ) Իրավունքի «քաղաքացիական» բնույթը

49. Քաղաքացիական ծառայողների մասնակցությամբ աշխատանքային վեճերի հետ կապված գործերում Դատարանը կիրառում է *Վիլհո Էսկելինենը եւ այլք ընդդեմ Ֆինլանդիայի* [*Vilho Eskelinen and Others v. Finland*] ([ՄՊ], թիվ 63235/00, §§ 61-62, ՄԻԵԴ 2007-II - «Էսկելինենի թեստ») գործով Մեծ պալատի կայացրած վճռով հաստատված երկու պարտադիր պայման ունեցող թեստը: Որպեսզի պատասխանող պետությունը կարողանա 6-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը բացառելիս Դատարանում հիմնվել դիմումատուի՝ քաղաքացիական ծառայողի կարգավիճակի վրա, պետք է բավարարվեն երկու պայմաններ: Պետությունն իր ներպետական իրավունքից պետք է ուղղակիորեն բացառի դատարան դիմելու հնարավորությունը քննարկվող պաշտոնի կամ աշխատանքի համար (տե՛ս *Գրզեդան ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] [*Grzęda v. Poland* [GC]], թիվ 43572/18, § 292, 2022 թվականի մարտի 15): Երկրորդ՝ բացառումը պետք է արդարացված լինի օբյեկտիվ հիմքերով՝ ելնելով պետության շահերից: Այս համատեքստում Դատարանը համարել է, որ ըստ էության կարող է հիմնավորում չլինել 6-րդ հոդվածի երաշխիքներից կոնկրետ քաղաքացիական ծառայողի եւ պետության միջեւ առկա հարաբերությունների հատուկ բնույթի հիման վրա սովորական աշխատանքային այնպիսի վեճերը բացառելու համար, ինչպիսիք են նրանք, որոնք կապված են աշխատավարձերի, նպաստների կամ նման

իրավունքների հետ: Փաստորեն, կլինի կանխավարկած, որ 6-րդ հոդվածը կիրառելի է: Պատասխանող կառավարությունը պետք է նախ ապացուցի, որ քաղաքացիական ծառայող հանդիսացող դիմումատուն ներպետական իրավունքի համաձայն չունի դատարանի մատչելիության իրավունք, եւ երկրորդ, որ քաղաքացիական ծառայողի համար 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքների բացառումն արդարացված է (վերելում հիշատակված՝ *Վիլհո Էսկելինենը եւ այլք*, § 62):

50. Դատարանը կուսումնասիրի, թե արդյոք դիմումատուին աշխատանքից ազատելու վերաբերյալ վեճը կարող է Էսկելինենի թեստի պայմանների հիման վրա բացառվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պաշտպանության շրջանակից:

51. Դատարանը նշում է, որ այն ժամանակ գործող Սահմանադրության եւ Դատական օրենսգրքի դրույթների ուժով Արդարադատության խորհուրդն ուներ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներին առնչվող իրավասություններ, մասնավորապես՝ այն կարող էր առաջարկել նրանց պաշտոնից ազատելը (տե՛ս վերելում՝ 25-րդ եւ 31-32-րդ պարբերությունները): Դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝ Արդարադատության խորհրդի կողմից հարուցված վարույթը կրում էր դատական բնույթ, եւ շահագրգիռ դատավորն իրավունք ուներ ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները (տե՛ս վերելում՝ 33-34-րդ պարբերությունները, եւ միանգամայն տարբերվող՝ *Բիլգենն ընդդեմ Թուրքիայի [Bilgen v. Turkey]* գործը, թիվ 1571/07, § 74, 2021 թվականի մարտի 9):

52. Ելնելով վերոնշյալից՝ Դատարանը նկատում է, որ ի տարբերություն կարգապահական այլ միջոցների, Արդարադատության խորհրդի՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու իրավասությունը սահմանափակվում էր այդ մասին Հայաստանի Հանրապետության նախագահին առաջարկ ներկայացնելով, որն ուներ դրան չհետեւելու հայեցողություն (տե՛ս Դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը եւ 166-րդ հոդվածը՝ մեջբերված վերելում՝ 32-րդ եւ 35-րդ պարբերություններում): Մասնավորապես տվյալ պահին գործող՝

Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը)՝ Հայաստանի Հանրապետության նախագահն ուներ Արդարադատության խորհրդի առաջարկությամբ դատավորների լիազորությունները դադարեցնելու իրավասություն: Միեւնույն ժամանակ, Դատական օրենսգրքի 166-րդ հոդվածի համաձայն՝ եթե Հանրապետության նախագահն Արդարադատության խորհրդի՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին առաջարկությունը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում չի դադարեցնում դատավորի լիազորությունները, ապա առաջարկությունը համարվում է մերժված:

53. Հետեւաբար Դատարանը գտնում է, որ այնքանով, որքանով հարցը վերաբերում է դատավորի լիազորությունների դադարեցմանը, Արդարադատության խորհուրդը տվյալ պահին չէր կարող հարցի վերաբերյալ կայացնել որեւէ վերջնական որոշում: Այն միայն կարող էր (ոչ պարտադիր) առաջարկություն ներկայացնել, իսկ դատավորին պաշտոնից ազատելու՝ պարտադիր իրավական ուժ ունեցող որոշումը պետք է ընդուներ Նախագահը: Այս եզրահանգումն այլեւս ավելորդ է դարձնում ուսումնասիրելը, թե արդյոք Արդարադատության խորհուրդը համապատասխանել է անկախության եւ անաչառության հետ կապված պահանջներին (տե՛ս, *mutatis mutandis*, վերելում հիշատակված՝ *Բիլգենի* գործը, § 74):

54. Ուստի ասվածից հետեւում է, որ կատարված դեպքերի ժամանակ Արդարադատության խորհուրդը պաշտոնից ազատելու վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությամբ օժտված մարմին չի եղել եւ դատական գործառույթ չի կատարել: Ավելին, ներպետական իրավունքը բացառում էր Արդարադատության խորհրդի՝ պաշտոնից ազատելու վերաբերյալ առաջարկություն տալու մասին որոշումը բողոքարկելու հնարավորությունը (տե՛ս վերելում՝ 30-րդ պարբերությունը): Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը հանգում է այն եզրակացության, որ ներպետական իրավունքով բացառվում էր դատավորին պաշտոնից ազատելու մասին որոշման հարցով դատարանի մատչելիությունը: Հետեւաբար Էսկելինենի թեստի առաջին պայմանը բավարարված է:

55. Համապատասխանաբար Դատարանը պետք է հաջորդիվ ուսումնասիրի, թե արդյոք Էսկելինենի թեստում նշված երկրորդ պայմանը, այն է՝ պարզել, թե արդյոք այդ բացառումն արդարացված է օբյեկտիվ հիմքերով՝ ելնելով պետության շահերից, բավարարվել է, թե՛ ոչ:

56. Միայն այն փաստը, որ դիմումատուն գտնվում է մի բաժնում կամ վարչությունում, որը մասնակցում է հանրային իրավունքով վերապահված լիազորությունների իրականացմանը, ինքնին որոշիչ չէ: Որպեսզի բացառումը հիմնավորված լինի, բավական չէ, որ պետությունը հաստատի, որ տվյալ քաղաքացիական ծառայողը մասնակցում է հանրային իշխանության իրականացմանը, կամ որ քաղաքացիական ծառայողի եւ պետության՝ որպես գործատուի միջեւ առկա է «վստահության եւ հավատարմության առանձնահատուկ կապ»: Պետությունը պետք է ապացուցի, որ տվյալ վեճի առարկան կապված է պետական իշխանության իրականացման հետ, կամ որ այն կասկածի տակ է դրել քաղաքացիական ծառայողի եւ պետության՝ որպես գործատուի միջեւ «վստահության եւ հավատարմության առանձնահատուկ կապը» (տ՛ես վերելում՝ *Վիլհո Էսկելինենը եւ այլք*, § 62):

57. Վերջերս քննված գործով, որը վերաբերում էր դատավորի՝ իր տեղափոխության մասին որոշումը վիճարկելու անկարողությանը (տե՛ս վերելում՝ *Բիլգենի* գործը), Դատարանը գտել է, որ արդարացված չէր լինի դատական իշխանության անդամներին Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պաշտպանության շրջանակից բացառելն այնպիսի հարցերում, որոնք վերաբերում են պետության նկատմամբ հավատարմության եւ վստահության առանձնահատուկ կապի հիման վրա նրանց աշխատանքային պայմաններին: Հանգելով այդպիսի եզրակացության՝ Դատարանը նշել է, որ թեեւ քաղաքացիական ծառայողի եւ պետության միջեւ աշխատանքային հարաբերություններն ավանդաբար կարող են սահմանվել որպես գործադիր իշխանության նկատմամբ վստահության եւ հավատարմության վրա հիմնված հարաբերություններ այնքանով, որքանով տվյալ պետության աշխատակիցներից պահանջվում է իրականացնել կառավարության քաղաքականությունը, այնուամենայնիվ, այդ նույնը չի գործում դատական

իշխանության անդամների դեպքում, որոնք այլ եւ ավելի անկախ դերակատարություն ունեն՝ կառավարության կողմից թույլ տրված ապօրինությունների եւ լիազորությունների չարաշահումների դեպքերը ստուգելու իրենց պարտականություններով պայմանավորված: Հետեւաբար պետության հետ նրանց աշխատանքային հարաբերությունները պետք է ընկալվեն դատական համակարգի անկախության համար էական հատուկ երաշխիքների եւ դատավորների անփոփոխելիության սկզբունքի լույսի ներքո: Այսպիսով, երբ խոսքը վերաբերում է հատուկ վստահությանը եւ հավատարմությանը, որոնք նրանք պետք է պահպանեն, դա պետք է ընկալել որպես հավատարմություն օրենքի գերակայությանը եւ ժողովրդավարությանը, այլ ոչ թե պետական իշխանությամբ օժտված անձանց: Դատավորի եւ պետության միջեւ աշխատանքային հարաբերությունների այս բարդ ասպեկտը պահանջում է, որ դատական համակարգի անդամներն իրենց պարտականությունները կատարելիս բավականաչափ հեռու մնան պետության մասշտաբով իշխանություն իրականացնող այլ մարմիններից, որպեսզի նրանք կարողանան որոշումներ կայացնել՝ *a fortiori* (մեծապես հիմնվելով) օրենքի եւ արդարության պահանջների վրա՝ առանց վախի զգացումի եւ անաչառորեն: Մոլորություն կլինեւ ենթադրելը, որ դատավորները կարող են ապահովել օրենքի գերակայությունը եւ կիրառել Կոնվենցիան, եթե ներպետական իրավունքը նրանց զրկում է Կոնվենցիայի հողվածների երաշխիքներից այնպիսի հարցերի մասով, որոնք ուղղակիորեն վերաբերում են նրանց անհատական անկախությանն ու անաչառությանը (նույն տեղում, § 79): Դատարանի կարծիքով՝ դա ավելի ճիշտ է սույն գործի հանգամանքներում, որը վերաբերում է դատավորի լիազորությունների դադարեցման վրա ազդող որոշմանը:

58. Ավելին, Արդարադատության խորհուրդն իր կարծիքով մեկ չպատճառաբանված որոշում կայացնելու համար դիմումատուին դատական համակարգից հեռացնելու վերաբերյալ որոշում կայացնելիս հենց ինքը չի ներկայացրել դիմումատուի նկատմամբ ամենալուրջ կարգապահական տույժը կիրառելու պատճառները (տ՛ես վերելում՝ 13-րդ պարբերությունը): Այս

հանգամանքներում Դատարանը հիմք չունի համարելու, որ վեճը վերաբերում էր որևէ բացառիկ կամ համոզիչ այնպիսի պատճառների, որոնք կարող էին արդարացնել որոշման՝ դատական կարգով վերանայման բացառումը (տե՛ս, *mutatis mutandis*, վերևում հիշատակված՝ *Բիլզենի գործը*, § 80):

59. Վերոնշյալ պատճառները հաշվի առնելով՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուին պաշտոնից ազատելու առաջարկության վերաբերյալ Արդարադատության խորհրդի կայացրած որոշման դատական վերանայման բացառումը չի կարող հիմնավորվել պետության ինքնիշխանության իրականացման հիման վրա: Հետևաբար 6-րդ հոդվածը կիրառելի է սույն գործի նկատմամբ, իսկ *ratione materiae* (առարկայական իրավագործության առումով) անհամատեղելիության վերաբերյալ Կառավարության առարկությունը (տե՛ս վերևում՝ 45-րդ պարբերությունը) պետք է մերժվի:



**զ) Անընդունելիության այլ հիմքեր**

60. Դատարանը նշում է, որ այս բողոքը ո՛չ ակնհայտ անհիմն է, ո՛չ էլ անընդունելի է Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

**Բ. Ըստ էության քննությունը**

61. Կառավարությունը, ըստ էության, կրկնել է վերոնշյալ 45-րդ պարբերության մեջ ամփոփված իր փաստարկները:

62. Դիմումատուն, ինչպես նշված է վերոնշյալ 46-րդ պարբերությունում, որևէ փաստարկ չի ներկայացրել՝ ի պատասխան Կառավարության դիտարկումների:

63. Դատարանը վերահաստատում է, որ դատարանի մատչելիության իրավունքը, այսինքն՝ քաղաքացիական գործերով դատարաններում վարույթ հարուցելու իրավունքը մի տարր է, որը բնորոշ է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքին, որը երաշխիքներ է սահմանում ինչպես դատարանի կազմակերպման եւ կազմի, այնպես էլ վարույթի իրականացման համար: Ամբողջը միասին կազմում են 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը: Այնուամենայնիվ, դատարանների մատչելիության իրավունքը բացարձակ չէ եւ կարող է ենթարկվել սահմանափակումների, որոնք չեն սահմանափակում կամ նվազեցնում անհատին տրամադրված՝ դատարան դիմելու իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Ավելին, որևէ սահմանափակում համատեղելի չի լինի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, եւ եթե գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջեւ չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (տե՛ս *Բական ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] [*Baka v. Hungary* [GC]], թիվ 20261/12, § 120, 2016 թվականի հունիսի 23՝ հաջորդող հղումների հետ միասին):

64. Սույն գործով Արդարադատության խորհրդի՝ դիմումատուի դատական լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ առաջարկի մասին 2011 թվականի հունիսի 24-ի որոշումը չի վերանայվել եւ բաց չի եղել վերանայման համար սովորական տրիբունալի կամ դատական լիազորություններ իրականացնող այլ մարմնի կողմից (տե՛ս Դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասը՝ մեջբերված վերելում՝ 30-րդ պարբերության մեջ, տե՛ս նաեւ Վարչական դատարանի՝ իրավազորությունից հրաժարվու մասին որոշումը, որն ամփոփված է վերելում՝ 17-րդ պարբերության մեջ): Թեև դիմումատուն օգտվել է Նախագահի 2011 թվականի հուլիսի 11-ի հրամանագիրը Վարչական դատարանում բողոքարկելու իր իրավունքից (տե՛ս վերելում՝ 21-23-րդ պարբերությունները), բայցեւայնպես այդ վարչական իրավունքի գործողության շրջանակը սահմանափակված էր Նախագահի հրամանագրի՝ ներպետական իրավունքի կիրառելի պահանջներին համապատասխանության մասով վավերությունը ստուգելով (տե՛ս մասնավորապես վերելում՝ 22-րդ պարբերությունը), այլ ոչ թե Արդարադատության խորհրդի 2011 թվականի հունիսի 24-ի այն որոշման փաստական եւ իրավական հիմքերի վերանայումը հնարավոր դարձնելով, որը հիմք էր հանդիսացել դրա համար: Հետեւաբար Դատարանը հիմքեր չունի համարելու, որ Վարչական դատարանն իրականացրել է «բավարար իրավազորություն» կամ ապահովել է իր վարույթում գտնվող՝ Արդարադատության խորհրդի 2011 թվականի հունիսի 24-ի որոշման «բավարար վերանայում» (տե՛ս *Ֆազիա Ալին ընդդեմ Միացյալ Թագավորության [Fazia Ali v. the United Kingdom]*, թիվ 40378/10, §§ 75-76, 2015 թվականի հոկտեմբերի 20) այնքանով, որքանով այն վերաբերում էր Նախագահի 2011 թվականի հուլիսի 11-ի հրամանագրի դեմ դիմումատուի կողմից ներկայացված վարչական հայցին:

65. Դատարանը նշում է վերոնշյալ 57-59-րդ պարբերություններում շարադրված իր եզրահանգումները, որ Արդարադատության խորհրդի՝ դիմումատուին պաշտոնից ազատելու վերաբերյալ առաջարկության մասին որոշման դատական վերանայման բացառումը չի կարող հիմնավորվել պետության ինքնիշխանության իրականացման հիման վրա, ինչպես պնդում էր

Կառավարությունը (տե՛ս վերելում՝ 45-րդ պարբերությունը): Թեև կիրառելիության խնդրին առնչվող այդ եզրահանգումները չեն սահմանափակում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխանության հարցի քննարկումը (տե՛ս վերելում հիշատակված՝ *Վիլհո Էսկելինենը եւ այլք*, § 64), սակայն դատավորներին պաշտոնից կամ աշխատանքից ազատելու դեպքում պետք է լինեն ծանրակշիռ պատճառներ, որոնք բացառապես արդարացնում են դատական վերանայման բացակայությունը (տե՛ս, *mutatis mutandis*, վերելում հիշատակված՝ *Բիլգենի* գործը, § 96): Այնուամենայնիվ, Դատարանին սույն գործով այդպիսի պատճառաբանություններ չեն ներկայացվել:

66. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ խախտվել է դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը (տե՛ս վերելում հիշատակված՝ *Բակայի* գործը, § 121, եւ դրանում մեջբերված համապատասխան միջազգային փաստաթղթերը):

67. Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

68. Դիմումատուն բողոքել է, որ խախտվել է ազատ արտահայտվելու իր իրավունքը, քանի որ Արդարադատության խորհուրդն առաջարկել է դադարեցնել դատավորի իր գործառույթը: Նա հիմնվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վրա, որի համապատասխան մասն ունի հետևյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության ...

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են

ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

69. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն ազատվել է զբաղեցրած պաշտոնից դատավարական օրենքի նորմերի կոպիտ խախտման եւ դատավորի վարքագծի կանոնների խախտման համար, քանի որ իր դատական գործառույթն իրականացնելիս ընդունել է չպատճառաբանված որոշում: Հետեւաբար Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի ազատ արտահայտվելու իրավունքին որեւէ միջամտություն չի եղել:

70. Դիմումատուն նշել է, որ շարունակում է պնդել իր սկզբնական բողոքը:

71. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը կիրառվում է նաեւ աշխատավայրի նկատմամբ, եւ որ առհասարակ քաղաքացիական ծառայողները (տե՛ս *Գուջան ընդդեմ Մոլդովայի* [ՄՊ] [*Guja v. Moldova* [GC]], թիվ 14277/04, § 52, ՄԻԵԴ 2008թ.), ինչպես նաեւ դատական համակարգի անդամները՝ ինչպես դիմումատուն, օգտվում են ազատ արտահայտվելու իրավունքից (տե՛ս *Ուիլլին ընդդեմ Լիխտենշտեյնի* [ՄՊ] [*Wille v. Liechtenstein* [GC]], թիվ 28396/95, § 41-42, ՄԻԵԴ 1999-VII, *Խուդյեշկինան ընդդեմ Ռուսաստանի* [*Kudeshkina v. Russia*], թիվ 29492/05, § 85, 2009 թվականի փետրվարի 26, եւ վերելում հիշատակված՝ *Բակայի* գործը, § 140):

72. Դատարանը բազմիցս ընդգծել է հասարակության մեջ դատական համակարգի հատուկ դերը, որը, որպես արդարադատության երաշխավոր, օրենքի գերակայությամբ առաջնորդվող պետության հիմնարար արժեք, պետք է վայելի հանրության վստահությունը, եթե ցանկանում է հաջողությամբ իրականացնել իր պարտականությունները (տե՛ս վերելում հիշատակված՝ *Բակայի* գործը, § 164՝ հետագա հղումներով): Այս նկատառումը մասնավորապես նշվել է դատավորների

ազատ արտահայտվելու իրավունքին վերաբերող գործերում (որպես օրինակ տե՛ս վերջերս քննարկված՝ *Գուզն ընդդեմ Լեհաստանի* [*Guz v. Poland*], թիվ 965/12, § 86, 2020 թվականի հոկտեմբերի 15):

73. Միեւնույն ժամանակ, որոշելու համար, թե արդյոք խախտվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածն այնքանով, որքանով այն վերաբերում է դատավորների ազատ արտահայտվելու իրավունքին, նախ պետք է պարզել, թե արդյոք վիճարկվող միջոցը համարվում է դիմումատուի ազատ արտահայտվելու իրավունքին արված միջամտություն՝ «ձեւականության, պայմանի, սահմանափակման կամ տույժի» տեսքով, թե դա քաղաքացիական ծառայության մատչելիության կամ քաղաքացիական ծառայությունում աշխատելու իրավունքի շրջանակներում է, որը երաշխավորված չէ Կոնվենցիայով: Այս հարցին պատասխանելու համար կիրառված միջոցի շրջանակը պետք է որոշվի այն գործի փաստերի եւ համապատասխան օրենսդրության համատեքստում դիտարկելու միջոցով (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ուիլլի* գործը, §§ 42-43՝ հետագա հղումներով, եւ *Հարաբինն ընդդեմ Սլովակիայի* (որոշ.) [*Harabin v. Slovakia (dec.)*], թիվ 62584/00, ՄԻԵԴ 2004-VI):

74. Այն դեպքում, երբ պարզվել է, որ դատավորների նկատմամբ կիրառված կարգապահական միջոցները բացառապես կամ հիմնականում պայմանավորված են եղել դիմումատուների ազատ արտահայտվելու իրավունքի կիրառմամբ, Դատարանը համարել է, որ միջամտություն է եղել նրանց ազատ արտահայտվելու իրավունքի իրականացմանը, որը երաշխավորված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով (տե՛ս, օրինակ, վերելում հիշատակված՝ *Խուդյեշկինայի* գործը, §§ 79-80, որտեղ դիմումատուի նկատմամբ կիրառված կարգապահական տույժը պայմանավորված է եղել լրատվամիջոցների համար նրա կողմից արված հայտարարություններով, եւ վերելում հիշատակված՝ *Բակայի* գործը, §§ 145-152, որտեղ դիմումատուի մանդատը վաղաժամկետ դադարեցվել էր այն բանից հետո, երբ նա հրապարակայնորեն իր տեսակետներն ու քննադատություններն էր արտահայտել դատական համակարգի վրա բացասաբար ազդող տարբեր օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ): Ի հակադրություն դրա՝ այն

դեպքում, երբ Դատարանը գտել է, որ վիճարկվող միջոցները հիմնականում կապված են եղել դիմումատուների՝ դատական գործառույթներ իրականացնելու համար համապատասխան մասնագիտական կարողությունների հետ, այն գտել է, որ որեւէ միջամտություն չի եղել Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված նրանց իրավունքներին (տե՛ս, ի թիվս այլնի, վերելում հիշատակված՝ *Հարաբինի* գործը, եւ *Միմիչն ընդդեմ Բոսնիայի եւ Հերցեգովինայի* (որոշ.) [*Simić v. Bosnia and Herzegovina* (dec.)], թիվ 75255/10, § 35, 2016 թվականի նոյեմբերի 15):

75. Սույն գործում դիմումատուն երբեւէ հրապարակային հայտարարություններ չի արել կամ որեւէ այլ կերպ չի մասնակցել հանրային բանավեճի իր մասնագիտական գործունեության շրջանակներում: Դատարանը նշում է, որ Արդարադատության խորհուրդը դիմումատուին պատժել է իրեն վերապահված գործով իր կողմից կայացված որոշումը պատշաճ կերպով չպատճառաբանելու համար (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը), ինչն իր գնահատմամբ եղել է դատավարական օրենքի նորմերի կոպիտ խախտում եւ դատավորի վարքագծի կանոնների կոպիտ խախտում՝ Դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերի իմաստով (տե՛ս վերելում՝ 31-րդ պարբերությունը): Թեւ Դատարանի գործառույթների մեջ չի մտնում այն հարցը որոշելը, թե արդյոք տվյալ պահին հիմնավորված էր դիմումատուին դատավորի պաշտոնից ազատելու վերաբերյալ առաջարկության մասին որոշումը, այնուամենայնիվ, այն նշում է, որ ամեն դեպքում վիճարկվող որոշումը պարզապես հիմնված է եղել դիմումատուի կողմից իր դատավարական գործառույթներն իրականացնելու վրա եւ որեւէ կերպ կապ չի ունեցել նրա ազատ արտահայտվելու իրավունքի իրականացման հետ կամ պայմանավորված չի եղել այդ իրավունքով: Հետեւաբար Դատարանը եզրակացնում է, որ որեւէ միջամտություն չի եղել դիմումատուի ազատ արտահայտվելու իրավունքի իրականացմանը, ինչպես երաշխավորված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով:

76. Ուստի այս բողոքը *ratione materiae* առումով անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ՝ 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, եւ պետք է մերժվի 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

IV. ԿՈՆՎԵՆՅՈՒՄԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ՝  
ԴԻՏԱՐԿԵԼՈՎ ԿՈՆՎԵՆՅՈՒՄԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

77. Դիմումատուն բողոքել է, որ ինքը խտրականության է ենթարկվել Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներից օգտվելիս: Նա հիմնվել է 14-րդ հոդվածի վրա, որի համաձայն՝

«Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից եւ ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

78. Դատարանի միատեսակ կիրառվող նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածը միայն լրացնում է Կոնվենցիայի եւ դրա արձանագրությունների մյուս նյութաիրավական դրույթները: Այն անկախ գոյություն ունենալ չի կարող, քանի որ գործում է բացառապես այդ դրույթներով պաշտպանված «իրավունքներից եւ ազատություններից օգտվելու» առնչությամբ: 14-րդ հոդվածի կիրառումը պարտադիր կերպով չի ենթադրում Կոնվենցիայով երաշխավորված նյութաիրավական իրավունքներից որեւէ մեկի խախտում: Այն անհրաժեշտ է, բայց նաեւ բավարար, որ գործի փաստերը ներառվեն Կոնվենցիայի մեկ կամ մի քանի հոդվածների շրջանակում (տե՛ս *Բիլերն ընդդեմ Շվեյցարիայի [ՄՊ] [Beeler v. Switzerland [GC]]*, թիվ 78630/12, §§ 47-48, 2022 թվականի հոկտեմբերի 11):

79. Դատարանը վկայակոչում է իր վերոհիշյալ եզրահանգումն առ այն, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն դիմումատուի ներկայացրած բողոքը չի մտնում սույն դրույթի շրջանակում, քանի որ նրա ազատ արտահայտվելու իրավունքի իրականացմանը որեւէ միջամտություն չի եղել (տե՛ս վերելում՝ 75-րդ եւ 76-րդ պարբերությունները): Այդտեղից հետևում է, որ 14-րդ հոդվածի համաձայն ներկայացված նրա համապատասխան բողոքը *ratione materiae* առումով նույնպես անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ 35-րդ

հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով եւ պետք է մերժվի 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

V. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԹԻՎ 12 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

80. Դիմումատուն բողոքել է, որ իր նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորվել, քանի որ ի տարբերություն այլ պաշտոնատար անձանց, ովքեր նմանատիպ պատճառաբանություններ են ներկայացրել խափանման միջոցների կիրառման վերաբերյալ իրենց որոշումներում, ինքը ենթարկվել է կարգապահական տույժի: Նա հիմնվել է Կոնվենցիայի թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածի վրա, որի համաձայն՝

«1. Օրենքով սահմանված ցանկացած իրավունքից օգտվելը պետք է ապահովվի առանց սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելու, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի վրա հիմնված խտրականության:

2. Ոչ մեկի նկատմամբ պետական մարմնի կողմից խտրականություն չպետք է դրսևորվի սույն հոդվածի 1-ին կետում նշված որևէ հիմքով»:

81. Դատարանը վերահաստատում է, որ եթե Կոնվենցիայի 14-րդ հոդվածն արգելում է խտրականությունը «Կոնվենցիայում շարադրված իրավունքներից եւ ազատություններից օգտվելիս», ապա թիվ 12 Արձանագրության 1-ին հոդվածը պաշտպանության շրջանակն ընդլայնում է «օրենքով սահմանված ցանկացած իրավունքի վրա»: Այսպիսով, այն սահմանում է խտրականության ընդհանուր արգելք (տե՛ս *Սեյդիչը եւ Ֆինչին ընդդեմ Բոսնիայի եւ Հերցեգովինայի [ՄՊ] [Sejdić and Finci v. Bosnia and Herzegovina [GC]]*, թիվ 27996/06 եւ թիվ 34836/06, § 53, ՄԻԵԴ 2009թ.):

82. Կարելու է նշել, որ թիվ 12 Արձանագրության 1-ին հոդվածն ընդլայնում է պաշտպանության շրջանակը ոչ միայն «օրենքով սահմանված ցանկացած իրավունքի» վրա, ինչպես կարելի էր ենթադրել 1-ին կետում շարադրված



տեքստից, այլև դրանից դուրս: Սա մասնավորապես բխում է 2-րդ կետից, որը նաև նախատեսում է, որ ոչ մեկի նկատմամբ պետական մարմնի կողմից խտրականություն չպետք է դրսևորվի (տե՛ս «*Savez crkava “Riječ života”-ն եւ այլք ընդդեմ Խորվաթիայի [Savez crkava “Riječ života” and Others v. Croatia]*», թիվ 7798/08, § 104, 2010 թվականի դեկտեմբերի 9): Համաձայն թիվ 12 Արձանագրության 1-ին հոդվածի բացատրական զեկույցի՝ այդ հոդվածի պաշտպանության շրջանակը վերաբերում է դեպքերի չորս կատեգորիաներին, մասնավորապես, երբ անձի նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորվում՝

i. ներպետական իրավունքի համաձայն անհատին հատուկ տրված ցանկացած իրավունքից օգտվելիս.

ii. այնպիսի իրավունքից օգտվելիս, որը կարող է ներպետական իրավունքի համաձայն ենթադրվել պետական մարմնի հստակ պարտավորությունից, այսինքն՝ երբ պետական մարմինը ներպետական իրավունքի համաձայն պարտավորված է որոշակի վարքագիծ դրսևորել.

iii. պետական մարմնի կողմից հայեցողական լիազորություններ իրականացնելիս (օրինակ՝ որոշակի սուբսիդիաներ տրամադրելը).

iv. պետական մարմնի ցանկացած այլ գործողությամբ կամ անգործությամբ (օրինակ՝ իրավապահ մարմինների աշխատակիցների վարքագիծը անկարգությունները վերահսկելիս)»:

Բացատրական զեկույցում նաև նշվում է, որ՝

«... ավելորդ է համարվել հստակեցնելը, թե այս չորս տարրերից որն է ընդգրկված 1-ին հոդվածի առաջին կետում, իսկ որը՝ երկրորդ: Երկու կետերը փոխլրացնող են, եւ դրանց համակցված ազդեցությունն այն է, որ բոլոր չորս տարրերն ընդգրկված են 1-ին հոդվածում: Պետք է նաև նկատի ունենալ, որ i-iv կատեգորիաների միջեւ տարբերությունները հստակ չեն, եւ որ ներպետական իրավական համակարգերը կարող են ունենալ տարբեր մոտեցումներ՝ կապված այն հարցի հետ, թե որ գործը որ կատեգորիային է պատկանում»:

83. Հետևաբար որոշելու համար, թե արդյոք թիվ 12 Արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է, Դատարանը պետք է պարզի՝ արդյոք դիմումատուի բողոքներն ընդգրկվում են Բացատրական զեկույցում նշված չորս կատեգորիաներից որեւէ մեկի շրջանակում (տե՛ս վերոնշյալ «*Savez crkava Riječ*

*života»-ն էլ այլք գործը, § 105):*

84. Այս կապակցությամբ Դատարանը նկատում է, որ տվյալ պահին գործող՝ Դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորվում էր դատավորների՝ մինչև 65 տարեկանը պաշտոնավարելու իրավունքը (տե՛ս վերելում՝ 27-րդ պարբերությունը): Ինչպես արդեն նշվել է (տե՛ս վերելում՝ 48-րդ պարբերությունը), այդ իրավունքը երաշխավորված էր նաև Սահմանադրության 96-րդ հոդվածով (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը): Հետևաբար դիմումատուն, որը տվյալ պահին մոտավորապես 55 տարեկան էր, ներպետական իրավունքի համաձայն իրավունք ուներ որպես դատավոր ծառայելու եւս տասը տարի ժամկետով: Ուստի Դատարանը գտնում է, որ այս բողոքը պատկանում է Բացատրական զեկույցում նկարագրված խտրականության դեպքերի վերաբերյալ առնվազն «i» կատեգորիային (տե՛ս վերելում՝ 82-րդ պարբերությունը), եւ հետևաբար Կոնվենցիայի թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է դրա նկատմամբ:

85. Դատարանը վերահաստատում է, որ 14-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության վերաբերյալ իր նախադեպային իրավունքում մշակված նույն չափանիշները կիրառելի են Կոնվենցիայի թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն հարուցված գործերի նկատմամբ (տե՛ս *Նապոտնիկն ընդդեմ Ռոմինիայի [Napotnik v. Romania]*, թիվ 33139/13, §§ 69-72, 2020 թվականի հոկտեմբերի 20, ընդհանուր սկզբունքների ամփոփման համար):

86. Դատարանը նշում է, որ Արդարադատության խորհուրդն առաջարկել է դադարեցնել դիմումատուի լիազորությունները դատավարական օրենքի նորմերի կոպիտ խախտման եւ դատավորի վարքագծի կանոնների կոպիտ խախտման հիմքով՝ համարելով, որ նա կայացրել է չպատճառաբանված որոշում: Մասնավորապես Արդարադատության խորհուրդը գտել է, որ ի հակադրություն դատավարական օրենքի համապատասխան նորմերի պահանջների՝ մեղադրյալին գրավի դիմաց ազատ արձակելու վերաբերյալ 2011 թվականի մայիսի 30-ի իր որոշման մեջ դիմումատուն չի ներկայացրել այն հիմքերը, որոնց հիման վրա նա

համարել է, որ դրանցում նշված իրավական դրույթները կիրառելի էին տվյալ գործի նկատմամբ (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը):

87. Դատարանը վերահաստատում է, որ իր նախադեպային իրավունքում այն համարել է, որ հաշվի առնելով այն կարեւոր տեղը, որ դատական համակարգը զբաղեցնում է ժողովրդավարական հասարակության պետական մարմիններում, եւ իշխանությունների տարանջատմանն ու դատական իշխանության անկախության պահպանմանը վերագրվող կարեւորության աճը՝ Դատարանը պետք է հատկապես ուշադիր լինի դատական համակարգի անդամներին նրանց կարգավիճակի կամ կարիերայի վրա ազդող միջոցներից պաշտպանելու հարցում, որոնք կարող են սպառնալ նրանց դատական անկախությանը եւ ինքնավարությանը (տե՛ս Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում՝ վերելում հիշատակված՝ *Բիլզենի* գործը, § 58՝ հետագա հղումներով):

88. Բացի այդ, հաշվի առնելով վերոնշյալ 37-րդ եւ 38-րդ պարբերություններում ներկայացված միջազգային նյութերը՝ Դատարանը նկատում է, որ որպես ընդհանուր սկզբունք դատավորները չպետք է անձնական պատասխանատվություն կրեն իրենց դատական գործառույթները բարեխղճորեն իրականացնելու համար: Այսինքն՝ դատավորի պատասխանատվության հետ կապված գործերում պետք է տարբերակում դնել մի կողմից օրենքի վիճելի մեկնաբանության կամ կիրառման եւ մյուս կողմից՝ այն որոշման կամ միջոցի միջեւ, որը բացահայտում է օրենքի լուրջ եւ կոպիտ խախտում, կամայականություն, փաստերի լուրջ խեղաթյուրում կամ դատական միջոցի կիրառման համար իրավական հիմքի ակնհայտ բացակայություն: Ավելին, այդպիսի դեպքերը պահանջում են հաշվի առնել դատավորի ենթադրյալ սխալ վարքագծի մտավոր տարրը: Բարեխիղճ իրավական սխալը պետք է տարբերակվի դատավորի անբարեխիղճ սխալ վարքագծից:

89. Հենց այս նկատառումները հաշվի առնելով է, որ Արդարադատության խորհրդի՝ իր գնահատմամբ մեկ չպատճառաբանված որոշում կայացնելու համար դիմումատուին դատական համակարգից հեռացնելու վերաբերյալ առաջարկ

ներկայացնելու մասին որոշումը, որն առկա կարգապահական միջոցներից ամենախիստն է (տե՛ս վերելում՝ 32-րդ պարբերության մեջ ամփոփված կարգապահական միջոցների համապատասխան աստիճանավորումը), դատական անկախության եւ ինքնավարության պաշտպանության պահանջի տեսանկյունից մնում է կասկածելի:

90. Վերոգրյալից ելնելով՝ Դատարանը նկատում է, որ ի պաշտպանություն իր այն փաստարկի, որ նրա նկատմամբ այլ դատավորներից տարբերվող վերաբերմունք է դրսևորվել (տե՛ս վերելում՝ 80-րդ պարբերությունը), դիմումատուն հիմնվել է կալանք նշանակելու եւ (կամ) գրավի միջնորդությունը մերժելու մասին դատական որոշումների օրինակների վրա, որոնք մեջբերված են Փաստաբանների պալատի կողմից 2011 թվականի հուլիսի 8-ին հրապարակված հրապարակային հայտարարության մեջ (տե՛ս վերելում՝ 14-րդ պարբերությունը): Դիմումատուն պնդել է, որ այդ օրինակները ցույց են տալիս, որ մյուս դատավորները պատճառաբանել են իրենց որոշումները, որոնք ծավալային եւ բովանդակային առումներով համեմատելի էին իր կողմից 2011 թվականի մայիսի 30-ի որոշման մեջ տրված պատճառաբանությունների հետ, սակայն այդ դատավորները չեն պատժվել, քանի որ նրանց որոշումները եղել են ի շահ մեղադրանքի կողմի:

91. Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ Փաստաբանների պալատի հայտարարությունը պարունակում էր քաղվածքներ մի քանի պատահական դատական որոշումներից, որոնք պարզապես մեջբերում էին այդ որոշումների այն մասերը, որոնք ավելի շատ արտացոլում էին համապատասխան դատարանների եզրակացությունները (տե՛ս վերելում՝ 14-րդ պարբերությունը), քան այդ որոշումների ամբողջական տեքստը: Այս քաղվածքները բավարար չեն ցույց տալու համար, որ այդ որոշումները դրանցում շարադրված պատճառաբանությունների ծավալային եւ բովանդակային առումներով համեմատելի էին այն որոշման հետ, որի առնչությամբ տույժ էր նշանակվել դիմումատուի նկատմամբ: Հետեւաբար

կասկածի տակ է դրվում այն հանգամանքը, թե արդյոք դիմումատուն, որը պատժվել էր 2011 թվականի մայիսի 30-ի որոշման մեջ պատճառաբանություններ չներկայացնելու համար, իրականում համեմատաբար նույն իրավիճակում է գտնվել, ինչպես այն մյուս դատավորները, որոնք որոշում են կայացրել կալանավորման կամ գրավի դիմաց ազատ արձակելու միջնորդությունների վերաբերյալ:

92. Ավելին, Դատարանը վերահաստատում է, որ դատարանների՝ իրենց որոշումների համար բավարար պատճառաբանություններ տալու պարտականությունը կիրառելու ծավալը կարող է տարբեր լինել՝ կախված որոշման բնույթից, եւ կարող է որոշվել միայն գործի հանգամանքների լույսի ներքո (տե՛ս *Ռուիզ Տորիյան ընդդեմ Իսպանիայի* [*Ruiz Torija v. Spain*], 1994 թվականի դեկտեմբերի 9, § 29, շարք Ա թիվ 303-Ա, եւ *Հիրո Բալանին ընդդեմ Իսպանիայի* [*Hiro Balani v. Spain*], 1994 թվականի դեկտեմբերի 9, § 27, շարք Ա թիվ 303-Բ): Հետեւաբար այն հարցը, թե կոնկրետ դատարանը կատարել է որոշակի որոշման համար պատճառաբանություն տրամադրելու իր պարտականությունը, թե՛ ոչ, չի կարող որոշվել վերացական ձեւով:

93. Ելնելով վերոգրյալից եւ հաշվի առնելով վերոհիշյալ նախադեպային իրավունքի սկզբունքները (տե՛ս վերելում՝ 85-րդ եւ 92-րդ պարբերությունները)՝ Դատարանը գտնում է, որ բացակայում են այն տարրերը, որոնք բավարար կլինեին հաստատելու համար, որ քննարկվող կարգապահական տույժը դիմումատուի նկատմամբ կիրառվել է տարբերվող վերաբերմունքի հետեւանքով:

94. Այստեղից հետեւում է, որ թիվ 12 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն դիմումատուի ներկայացրած բողոքն ակնհայտ անհիմն է եւ պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի:

## VI. ԿՈՆՎԵՆՅՈՒՄՆԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

95. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

## Ա. Վնասը

96. Դիմումատուն պահանջել է 85 451 եվրո (EUR)՝ բաց թողնված եկամտի դիմաց եւ 38 236 եվրո՝ որպես նյութական վնասի հատուցում՝ Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից՝ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքի հիման վրա հաշվարկվող տոկոսի չափով: Նա լրացուցիչ պահանջել է 16 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

97. Կառավարությունը պնդել է, որ նշված նյութական վնասի եւ ենթադրյալ խախտման միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ չկա: Նրա կարծիքով՝ ոչ նյութական վնասի հետ կապված պահանջը չափազանցված է:

98. Դատարանը որեւէ պատճառահետեւանքային կապ չի տեսնում դատարանի մատչելիության իրավունքի խախտման եւ ենթադրյալ նյութական վնասի միջեւ: Հետեւաբար սույն հարցի վերաբերյալ որոշում ընդունելու որեւէ հիմնավորում չկա (տե՛ս *Սաղաթեյյանն ընդդեմ Հայաստանի [Saghatelyan v. Armenia]*, թիվ 7984/06, § 57, 2015 թվականի հոկտեմբերի 20): Դատարանն ընդունում է, որ դիմումատուն կրել է ոչ նյութական վնաս, ինչպիսիք են անհանգստությունն ու հիասթափությունը, որը պայմանավորված է եղել իրեն պաշտոնից ազատելու օրինականությունը վիճարկելու նրա անկարողությամբ, ինչը բավարար չափով չի փոխհատուցվում Կոնվենցիայի խախտում արձանագրելու դեպքում: Դատարանը, կատարելով իր գնահատումն արդարության սկզբունքի հիման վրա, դիմումատուին շնորհում է 3 600 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ. այն պետք է վճարվի դիմումատուի այրուն եւ դստերը՝ համատեղ:

**Բ. Ծախսերը եւ ծախքերը**

99. Դիմումատուն նաեւ պահանջել է 1 578 եվրո՝ որպէս հատուցում Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար: Դիմումատուն ներկայացրել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որով նա պարտավորվում էր վճարել այդ գումարը, որը պետք է ներառեր նաեւ ցանկացած փոստային ծախս, միայն այն դեպքում, երբ Դատարանն իր որոշումը կայացնէր նրա օգտին:

100. Կառավարությունն այս պահանջները վիճարկել է:

101. Դատարանը նախկինում ճանաչել է ըստ արդյունքի վարձատրության մասին պայմանագրերի վավերությունը՝ դատական ծախսերի համար հատուցում շնորհելու նպատակով (տե՛ս, օրինակ, վերելում հիշատակված՝ *Սադաթեյյանի* գործը, § 62, *Սաստրյանն ընդդէմ Հայաստանի [Asatryan v. Armenia]*, թիվ 3571/09, §§ 78-79, 2017 թվականի ապրիլի 27, եւ *Սաֆարյանն ընդդէմ Հայաստանի [Safaryan v. Armenia]*, թիվ 576/06, §§ 62-63, 2016 թվականի հունվարի 21): Դատարանն այս գործում այդ մտեցումից շեղվելու որեւէ պատճառ չի տեսնում:

102. Ելնելով վերը նշվածից՝ Դատարանը գտնում է, որ Դատարանում կրած դատական ծախսերը պարտադիր կերպով կատարվել են հայտնաբերված խախտման համար փոխհատուցում ապահովելու համար: Այնուամենայնիվ, Դատարանը կրկին նշում է, որ դատական ծախսերը հատուցելի են միայն այնքանով, որքանով դրանք վերաբերում են հայտնաբերված խախտմանը: Դատարանը նշում է, որ սույն գործում հայտնաբերվել է 6-րդ հոդվածի խախտում՝ կապված դատարանի մատչելիության բացակայության հետ, թեւէ գրավոր բողոքների ամբողջությունը, ներառյալ՝ նախնական գանգատը եւ հետագա դիտարկումները, վերաբերում էին Կոնվենցիայի 10-րդ եւ 14-րդ հոդվածների եւ թիվ 12 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն ներկայացված բազմաթիվ այլ բողոքների, որոնք ճանաչվել էին անընդունելի (տե՛ս, *mutatis mutandis*, վերելում հիշատակված՝ *Սադաթեյյանի* գործը, § 63): Հետեւաբար դիմումատուի պահանջած դատական ծախսերը չեն կարող ամբողջությամբ փոխհատուցվել, քանի որ Դատարանը մասամբ մերժել է դիմումատուի բողոքները: Հաշվի առնելով իր

տրամադրության տակ ունեցած փաստաթղթերը եւ վերոնշյալ չափորոշիչը՝ Դատարանը ողջամիտ է համարում տրամադրել 1 300 եվրո՝ այս մասով ծախսերը փոխհատուցելու համար: Այս գումարը պետք է վճարվի դիմումատուի այրուն եւ դստերը՝ համատեղ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱԴԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Վճռում է*, որ դիմումատուի այրին՝ տկն Լիա Մնացականյանը, եւ դուստրը՝ օրիորդ Հասմիկ Մնացականյանը, իրավունք ունեն դիմումատուի փոխարեն շարունակելու սույն գործով վարույթը:

2. *Հայտարարում է* դատարանի մատչելիության իրավունքի բացակայության մասին բողոքն ընդունելի, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի:

3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

4. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուի այրուն եւ դստերը միասին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 3 600 եվրո (երեք հազար վեց հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 1 300 եվրո (հազար երեք հարյուր եվրո)՝ գումարած դիմումատուի ժառանգներից գանձման ենթակա ցանկացած հարկ:

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչեւ վճարման



օրը պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2022 թվականի դեկտեմբերի 6-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Իլգե Ֆրայվըրթ՝

Քարտուղարի տեղակալ

Յոնկո Գրոզե՝

Նախագահ